Հովհաննես Թումանյան

Գիշեր

Եկավ գիշերն՝ սփոփանքը
Անմխիթար սրրտերի,
Եվ սարերի կերպարանքը
Փոխվեց անեզր ստվերի:

Հաղթահարված խորին քնից՝
Պապանձվեցին ամեն տեղ,
Մութն ու խավար հորիզոնից
Ծագեց լուսին փառահեղ:

Եվ երկնքում բարձր կախված

Սիփան սարի կատարին,
Մունջ նայում էր նա դեպի ցած՝
Տխուր նիրհող աշխարհին:

Ներրա փափուկ, արծաթահեր
Հով շողերը իրանց հետ

Թափում էին հանգստաբեր
Նիհր ու թմբիր քաղցրավետ:

Սակայն գիշերն այն հեգ երկրում
Հանգստության փոխանակ
Ահ ու սարսափ է միշտ բերում,

Գաղտնի հարված ու տանջանք:

Գիշերային լռության մեջ
Ծանրը տնքոց է լսվում,
Եվ աղաչանք, և լաց անվերջ,
Եվ... ողջ լեզվով չի ասվում:

Էն ճամփորդն է, ճամփի տակին
Չարչարվում է՝ կիսամահ,
Էն ծնողն է իր զավակին
Ողբում, կանչում... և չըկա...

Կույս աղջիկն է լըլկանքի մեջ,

Ալևորը խոր բանտում...
Էն կտրիճն է հայրենատենչ
Խիզախ հոգին ավանդում...

Եվ կյանքն այնտեղ ծանր ու խավար
Մի գիշեր է ահավոր...

Եվ ո՛վ գիտե, որի՞ համար
Կլուսանա բարի օր:

1890